


**1.2.7. Մանրածախ առևտուր, այլ ծառայություններ
(սպառողական շուկա)**

**ՀՀ սպառողական շուկա (մանրածախ ապրանքաշրջանառության և
բնակչությանը մատուցված ծառայությունների ծավալը)**

	2003թ. հունվար-մայիս		Ընդհանուրի նկատմամբ, %	
	փաստացի ծավալը, մլն. դրամ	2002թ. հունվար- մայիսի նկատմամբ, %	2003թ. հունվար- մայիս	2002թ. հունվար- մայիս
Մանրածախ ապրանքաշրջանառության և բնակչությանը մատուցված ծառայությունների ծավալը, ընդամենը	301274.9	111.5	100.0	100.0
<i>այդ թվում</i>				
մանրածախ ապրանքաշրջանառություն	224633.2	112.2	74.6	73.9
բնակչությանը մատուցված ծառայություններ	76641.7	109.7	25.4	26.1

**ՀՀ սպառողական շուկայում մանրածախ ապրանքաշրջանառության և բնակչությանը
մատուցված ծառայությունների ծավալների տեսակարար կշիռները**
(ընդհանուրի նկատմամբ, %)



2003թ. հունվար-մայիսին գրանցվել է սպառողական շուկայի ծավալի աճ 2002թ. հունվար-մայիսի համապատասխան ցուցանիշի նկատմամբ, համադրելի գներով, 11.5%-ով և դրանում 0.7 տոկոսային կետով ավելացել է մանրածախ ապրանքաշրջանառության ծավալի տեսակարար կշիռն ու համամասնորեն նվազել բնակչությանը մատուցված ծառայությունների ծավալի տեսակարար կշիռը:

Մանրածախ առևտուր


2003թ. հունվար-մայիսին ՀՀ սպառողական շուկայում մանրածախ ապրանքաշրջանառության ընդհանուր ծավալը, ընթացիկ գներով, կազմել է 224633.2 մլն. դրամ, որը 2002թ. նույն ժամանակաշրջանի համապատասխան ցուցանիշի նկատմամբ, համադրելի գներով, աճել է 12.2%-ով: 2003թ. մայիսին ապրիլի համեմատությամբ մանրածախ ապրանքաշրջանառության ծավալը, համադրելի գներով, կազմել է 101.9%:

ՀՀ մանրածախ ապրանքաշրջանառության ծավալը 2003թ. հունվար-մայիսին

	Ապրանքաշրջանառության ծավալը, մլն. դրամ	Ապրանքաշրջանառության տեսակարար կշիռը ընդհանուրի նկատմամբ, %
Ընդամենը	224633.2	100.0
այդ թվում .		
խանութներ	125780.4	56.0
հանրային սնունդ	2194.5	1.0
սպառողական ապրանքների շուկաներ	61557.5	27.4
գյուղատնտեսական արտադրանքի շուկաներ	9208.1	4.1
կրպակներ	25892.7	11.5

Մանրածախ ապրանքաշրջանառության կառուցվածքն ըստ ձևավորման աղբյուրների, 2003թ. հունվար-մայիսին

(ընդհանուրի նկատմամբ, %)



2003թ. հունվար-մայիսին ՀՀ մանրածախ ապրանքաշրջանառության ընդհանուր ծավալում մեծ տեսակարար կշիռ է ունեցել խանութներում, սպառողական ապրանքների շուկաներում և կրպակներում իրականացվող առևտուրը՝ 94.9% (213230.6 մլն. դրամ):

ՀՀ մանրածախ ապրանքաշրջանառության ընդհանուր ծավալում առանձնակի տեղ ունեն սպառողական ապրանքների շուկաները: Հաշվառված սպառողական ապրանքների շուկաներից ստացված հաշվետվությունների տվյալներով և փորձագիտական լրահաշվարկի հիման վրա, 2003թ. հունվար-մայիսին ապրանքաշրջանառության ծավալը, ընթացիկ գներով, կազմել է 61557.5 մլն. դրամ:


ՀՀ սպառողական ապրանքների շուկաների ապրանքաշրջանառության ծավալների վերաբերյալ տվյալներն ըստ ՀՀ մարզերի և ք. Երևանի 2003թ. հունվար-մայիսին

	Ապրանքաշրջանառության ծավալը, մլն. դրամ	այդ թվում՝ ընդհանուրի նկատմամբ, %	
		պարենային ապրանքներ	ոչ պարենային ապրանքներ
ք. Երևան	56456.0	12.5	87.5
Արագածոտն	117.1	-	100.0
Արարատ	301.3	15.7	84.3
Արմավիր	765.8	35.7	64.3
Գեղարքունիք	485.0	22.9	77.1
Լոռի	1159.6	48.7	51.3
Կոտայք	740.0	15.1	84.9
Շիրակ	491.7	-	100.0
Սյունիք	199.6	3.4	96.6
Վայոց ձոր	88.6	-	100.0
Տավուշ	752.8	34.5	65.5
Ընդամենը ՀՀ	61557.5	13.7	86.3

Հարկ է նշել, որ հանրապետությունում հաշվառված սպառողական ապրանքների շուկաները հիմնականում մասնագիտացված են ոչ պարենային ապրանքների վաճառքով, որի տեսակարար կշիռը սպառողական ապրանքների շուկաների ապրանքաշրջանառության ընդհանուր ծավալում, 2003թ. հունվար-մայիսին, կազմել է 86.3%:

ՀՀ սպառողական ապրանքների շուկաների ապրանքաշրջանառության ընդհանուր ծավալն ըստ Երևան քաղաքի և մյուս մարզերի (ամփոփ)

(ընդհանուրի նկատմամբ, %)



2003թ. հունվար-մայիսին 2002թ. հունվար-մայիսի համեմատությամբ հանրապետության սպառողական ապրանքների շուկաների ապրանքաշրջանառության ամբողջ ծավալում գրանցվել է Երևան քաղաքի շուկաների ապրանքաշրջանառության ծավալի տեսակարար կշռի նվազում 0.3 տոկոսային կետով:

2003թ. հունիսի 1-ի դրությամբ ապրանքային պաշարները մանրածախ առևտրի կազմակերպություններում կազմել են 37948.5 մլն. դրամ, իսկ ապահովվածությունը՝ 52օր:

ՀՀ սպառողական շուկայում իրենց ուրույն տեղն ունեն գյուղատնտեսական արտադրանքի շուկաները: Հունվար-մայիսին այդ շուկաներում իրականացվող առևտրին բաժին է ընկել ընդհանուր ապրանքաշրջանառության ծավալի 4.1% կամ 9208.11 մլն. դրամը:

1 Հանրապետությունում գործող գյուղատնտեսական արտադրանքի չկազմակերպած շուկաների ապրանքաշրջանառության ծավալները հաշվառված չեն:

Բնակչությանը մատուցված ծառայություններ


2003թ. հունվար-մայիսին հանրապետությունում, ըստ ծառայություններ մատուցող կազմակերպություններից և անհատ ձեռնարկատերերից ստացված հաշվետվությունների տվյալների, ինչպես նաև չհաշվառված դաշտի լրահաշվարկի, բնակչությանը մատուցված ծառայությունների ծավալը կազմել է 76641.7 մլն.դրամ, որը 2002թ. հունվար-մայիսի նույն ցուցանիշի նկատմամբ, համադրելի գներով, աճել է 9.7%-ով:

Բնակչությանը մատուցված կենցաղային ծառայությունների ծավալը կազմել է 1134.5 մլն. դրամ, որը 2002թ. նույն ժամանակաշրջանի համապատասխան ցուցանիշի նկատմամբ, համադրելի գներով, աճել է 34.0%-ով:

2003թ. հունվար-մայիսին 2002թ. հունվար-մայիսի համեմատ ծառայությունների ոլորտում արձանագրվել է սակագների 1.9% հավելաճ, որը հիմնականում պայմանավորված է օդային տրանսպորտի (5.7%), փոստային և հեռահաղորդակցության (12.3%), կրթության (2.8%), մշակույթի (10.8%), զբոսաշրջության և էքսկուրսային (2.6%) ծառայությունների սակագների հավելաճով: Միաժամանակ նվազել են բժշկական սպասարկման և առողջարանների ու հանգստյան տների ծառայությունների սակագները, համապատասխանաբար՝ 0.7 և 1.2%-ով:

Բնակչությանը մատուցված ծառայությունների կառուցվածքը 2003թ. հունվար-մայիսին,

(ընդամենի նկատմամբ, %)



2003թ. հունվար-մայիսին բնակչությանը մատուցված ծառայությունների կառուցվածքում մեծ տեսակարար կշիռ են կազմել մարդատար տրանսպորտի (23651.5մլն.դրամ) և բնակարանային-կոմունալ տնտեսության (23312.1մլն.դրամ) ծառայությունները, համապատասխանաբար՝ 30.9 և 30.4%:

2003թ. հունվար-մայիսին խաղատների ծառայությունների ծավալը կազմել է 469.9 մլն.դրամ կամ բնակչությանը մատուցված ծառայությունների ընդհանուր ծավալի 0.6%-ը: Բնակչությանը մատուցված համակարգչային ծառայությունների ծավալը կազմել է 33.1 մլն. դրամ: